

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԿԱՐԻԱ

Տարեկան 12 փ.
Տեղական 6 «

ԱՐՏԱՍՍ. ՇՄԱՆ

2 րիւ լեկ ծրուով
Տարեկան 14 փ.
Վեցամսեայ 7 փ.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տղ.
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԽԻԿ

— 0 —

Մանուգրան տղր
20 անթրի



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԲԻ

ՀԱՅՏԻ

Rédaction du journal

„Iravounk“

V A R N A (Bulgarie)

— 0 —

Редакция
на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

— 0 —

Գրասխանիս և
չին տղրի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Երկսեռ Որբահամ ընկերու-
թեան Գրք. Ընդհ. Ժողովը, որ
տեղի պիտի ունենար անցեալ կի-
րակի դեկտ. 2ին, շնորհաբոց մե-
ծամասնութեան ներկայ չի գրու-
նուելով յետաձգուեցաւ յառաջի-
կայ կիրակի դեկտ. 9ին, կէս օ-
րէն վերջ, ժամը ճիշդ 2ին. ազգ.
վարժարանի սրահին մէջ:

Օրակարգ

- Ա.—Գործ. Ժողովոյ վեցամսեայ
համարաւորութիւն:
- Բ.—Գործ. Ժողովոյ նոր ընտ-
րութիւնը
- Գ.—Ընդհանուր գիտնի հը-
րաժարեալ երկու անդամոց
ընտրութիւն:

Ըստ տրամադրութեան կանոնա-
գրի Թորք յօդուածին, այս երկ-
րորդ անգամ քանի անգամ որ ո-
րոշեալ ժամուն ներկայ գտնուի,
մեծամասնութիւն պիտի համա-
րուի ու նիստը բացուի: Դիւանս
կը փափաքի որ անգամը անձամբ
և ստուար թուով ներկայանան:

Մնաւք յարգանք
Ընդհ. Ժողովոյ Դիւան

Ատենապետ Ատենապետ
Ա. ՓԱՋԱՋԱՆ Թ. ԳՈՒՐՊԵԹԵԱՆ
Վառնա, 4 դեկտ.

ՃԵՄԱՐԻՏ ԼԱՅՈՐ

Ամեն անգամ որ գծիւք դար-
ձած մեր չարաբանութիւն հայրենիքի
մէջ անկիւնէն նոր աղէտի մը գոյ-
ժը կը հասնի արտասահման, տես-
նելով ամենահարուստ դասակար-
գէն սկսեալ մինչեւ յետին աղքա-
տին ողբանքը այդ վերահաս ա-
ղէտին վրայ, սիրտը պաղ
հով մը կուգայ կանցնի դէմքերնուս
վրայէն ու կաճապարենք հաճելի
փութկոտութեամբ մը դրուատել
արտասահմանի հայութեան սրտ-
ցաւութիւնը մեր հայրենակիցնե-
րուն նկատմամբ:

Ամեն ոք հառաչանք մը ունի
կոկորդին մէջ, զոր պատեհ առիթ
կը փնտռէ ձօնելու, առաջին ան-

գամ ի, են հոնդպող մարդուն:
Մուշն ու Սասուն շարքուն
կոր. ախ. չես գիտեր որչափ
յուզուած են արտասահմանի բո-
լոր հայերը:

Որբեր՝ Հայաստանի անծաղիկ
ու ամայացած լեռանց վրայ, մե-
ղուններու պէս բզզան կոր. ար-
տասահմանեանք՝ չես գիտեր, ինչ
մորմօքիչ շեշտերով կը բացատրեն
իրարու այդ պղտիկներուն ամեն.
օրեայ մարտիրոսութիւնը:

Առիւծ մը՝ Անգրանիկ անունին
տակ ամբողջ նահատակ ժողովրդի
մը զայրութիւն մարմնացումը կը
կուսի կոր յուսահատական սուրբ
կուր. մենք՝ արտասահմանեան
ներս՝ չես գիտեր, սրտի ինչ յու-
զուով կը հետեւինք անորմէ հա-
սած ամեն մէկ յորին:

Կարին կը փլի կոր, ու այս
անգամ Ալլահի շուքը չ'է, որ այդ
աւերակը կը շինէ, այլ նոյն ինքն
Ալլահը. և մենք՝ չես գիտեր, ինչ
անով ու վախով կը գուժենք ա-
ղէտը իրարու, անոր բոլոր սրտա-
ճըմիկ մանրամասնութիւնովը:

Վերջապէս, սա ստոյգ է որ
արտասահմանի էն անառակ հայն
անգամ, որ շանթաններու կեանքը
ապրելով, փճացած է բարոյապէս,
իւրու ու է աղէտի յայտնի յու-
զուով կը ծածուռէ իր դէմքը:

Ու այս ամենի բուռական չ'են տ-
պացուցանելու մ'ը գորովը դէպի
մեր հայրենիքի մշտադաւան եղ-
բայրները: Բաւական չ'են հաստա-
տելու թէ մենք գիտենք սիրել
մեր տառապող հայրերը, մայրերը,
կիներն ու զաւակները:

Ոչ միայն բաւական են, այլ
չատ իսկ են, այն պայմանաւ սա-
կայն որ այդ ամեն սրտցաւու-
թիւններ միան իրենց պղտոտնա-
կան գիճակին մէջ և ըլլան չոր
խօսքով միայն:

Այո՛, կուրծք և պէտք է իրոս
տովանի՝ որ քիչ մըն ալ շատ
կուրծք, բայց՝ ամբողջ, որ լա-
ցած ատենինս անգամ իրիկուս
մեր տղեղ ժամանցներուն պայ
մանները կորոշենք մտովի:

Հարուստը՝ որ — բաւած եմ ու
կը կրկնեմ — մեր մէջ զոյգ մը
թրքական մոլութիւններով ալ-
լասերուած փոշիք է, հեշտաւէտ

մոհիւն և քանի մը քոռ թըղ-
թախողին վրայ կը խորհի ապա-
հովապէս, երբ տակուին չորցած
չեն՝ հանրային նորայուր աղէտին
վրայ թափած իր կոկորդինեան
աղբուքները:

Իսկ էսնաֆն ու աղքատը՝ յա-
ւիտենական սուտիկէ սիրտ-սիրտ
վրայ է դրած իր յոյսը. անիծա-
պարտ ձրկիւղին:

Ոչ ոք կը մտածէ դրական մի-
ջոցներով օգնութեան հասնիլ,
շարգուողին, կուռողին, որքին ու
քանկուողին:

Սուտ եմ:
Հաւած հերքելու համար գործ.

նական ապացոյցի պէտքը կայ:
Ահաւասիկ կարին աղեկտուր
տեսարան մը կը ներկայէ մեզի
նոր է աղետը և հանրութեան
խիղճը վրդովելու ամեն հանգա-
մանք սին: Իր Առաջնորդը, իր
պաշտօնական մարմինները կոչ
կընեն մեր խղճին, Մեր մուրա-
ցիկն անգամ կարող է բան մը ը-
նել՝ գետերու պէս հոսող այդ ար-
ցունքները չորցնելու համար:

Օ՛ն ուրիմ, ճշմարիտ լացը լա-
ցած ըլլանք, օգնելով մեր այդ
արկածեալ եղբայրներուն:

Դէս ոչ Դէն

ԹԺՐԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

[Մեր մասնաշտր քղապետն]

Ոֆիս, 29 նոյ. 1901

Փոխառութեան խնդիրն է որ զեռ
կըրքաղեցնէ մտքերը. թէեւ ըստ նախ-
նական պայմանագրութեան մինչեւ
երեքշաբթի (27 նոյ.) Սօսրանիէն
պէտք էր քուէարկէր փոխառութիւնը,
բայց խնդրոյ փափկութիւնը և լըբ-
ջութիւնը և երեսփոխաններու այն
համոզումը թէ պէտք է աւելի պաղ-
արիւն գտնուիլ և մտածել հանդէպ
խնդրոյ մը սրպիւնի է ներկայ փոխ-
առութիւնը և ծխախոտի մեղաշնորհ
որոնք կընան ապագային կապել
Պուլկարիոյ առեւտրական գլխաւոր
թիւերը և ֆոնախիսի համաձայն Պուլ-
կարիոյ տնտեսական գրութիւնը այն-
պիսի սեղմութեամբ և նիւթարկել որոնց-
մէ գծուած ըլլալ ազատիւր: Եւ միւս
կողմէ օրակարգին վիճաբանութիւնը
բնականաբար կարծուածէն շատ աւելի
երկար տեւելով պատճառ եղաւ որ

զեռ ցայս վայրկեան վերջնական բա-
ռին արտասանութիւնը յետաձգուի:
Այսօր բնաւ նիստ չը կար, վաղը կը
յուսացուի թէ ամեն ինչ վերջնայ
— փոխառութեան մեքուտ կամ ըն-
դունուիլը: Կառավարութիւնը յաջո-
ղած է հինգ օր եւս պայմանաժամ ըս-
տանալ դրամատէն, վաւերացնել
տալու համար: [Մերժուած է: Ոմր.]

Մեր շահագրգռութիւնը որով հետե-
ւեցանք խնդրոյն ամեն մանրամաս-
նութեանց և յիշօրէն հետադառն
էինք զայն Պուլկարիոյ արդի ելեւմը-
տական անձուկ վիճակին վերաբեր-
մամբ, կը կարծենք թէ, ինչպէս
յայտնած էինք ուրիշ առթիւ, Սօս-
րանիէն պիտի քուէարկէր փոխառու-
թիւնը, համակերպելով ժամանակին
և գրութեան պահանջին: Բայց երբ
նախնական պայմանագրութիւնը և
ծխախոտի մեղաշնորհի կանոնագրու-
թիւնը կարգացինք դրամացանք:
Չարմացանք թէ ինչպէս Սօսրաֆօֆի
և Տ, Տանէվի նման կարող անձնա-
ւորութիւններ իրենց գլուխ ունենա-
լով Գորաւէլով մը որ Պուլկարիոյ
առաջնակարգ ելեւմտաղէտը և տնտե-
սաղէտը կը համարուի, անհետաւոր
գտնուած և համակերպած ըլլան Բա-
րիդի դրամատան հետ այնպիսի պայ-
մաններու որ, վստահաբար իրենց
ձեռքերը ձեռնակապի մէջ դրած ըլլա-
լու կը ծառայեն և ոչ ուրիշ բանի:
Եւ փոխանակ գրութեան դրաման մը
տարած ըլլալու յետին չար քան դա-
ռաջին ըրած պիտի ըլլան:

Մեր նախորդ թղթակցութեամբ փո-
խառութեան պայմաններու մասին և
մեղաշնորհի վերաբերեալ զլիաւոր կէ-
տերը պարզած էինք, այժմ կուգանք
սալ յրացոյցիչ մի քանի տեղեկու-
թիւններ և անկէ վեր՝ պատահած և
զելութիւններ:

Երբ առաջին անգամ ժողովոյ մէջ
սկսաւ փոխառութեան վիճաբանու-
թիւնը, ներքին գործոց նախարար
Սօսրաֆօֆ երկայն ճառով մը բացատ-
րեց իշխանապետութեան տնտեսական
ներկայ բազմադակ կացութիւնը և
ըսաւ թէ կառավարութիւնը ստիպ-
ուած էր այս կացութիւնը բարեփո-
շու համար գիտնլ փոխառութեան մը
և խնդրեց ու կոչոււ ըրաւ երեսփո-
խաններու հայրենասիրական զգաց-
մանց որ ի նպաստ փոխառութեան
քուէարկեն: Բայց կը թուի թէ նա-
խարարին ներքողականը ոչ ինչ աղ-
ղեցութիւն ըրաւ, վասն զի իրմէն
վերջ խօսող և փոխառութեան ի նը-
պաստ կարծիք յայտնող միայն Աղա-
տականներու պէտ Տ. Թէթթօֆ եղաւ:
անկէ յետոյ ճառախօսող բոլոր երես-
փոխանք, ընդ որս ի. է. Կէշով.
նախկին նախագահ ազգ. ժողովոյ
Ազգ. Ազատական կուսակցութեան

պետ եւ նշանաւոր դրամատէր, դէմ խօսեցան եւ յայտարարեցին թէ պայմանները խիստ ծանր եւ անտանելի են եւ կործանարար Պուլիարիոյ համար:

Այժմ ընդհանուր կարծիքն այն է թէ Սօպրանիէն չը պիտի քուէարկէ փոխառութիւնը եւ արդի նոխարարութիւնը քնակաւարար պիտի հրաժարի: (Արդէն հրաժարեցաւ ինքնը):

Մենայնորհի խնդիրը ամենէն աւելի ծխախոտի գործարանատէրերու շահերը հիմնապէս ասանկոխ կընէ. արդէն 15 օր առաջ ամբողջն ալ մայրաքաղաքս եկած էին եւ միահամուռ աղիւսագիր մը տուած էին կառավարութեան, խնդրելով որ մենայնորհի չի որոշուի օտար ընկերութեան մը, այլ եթէ կառավարութիւնը ստիպեալ է ծխախոտի եկամուտը փոխառութեան գրաւ տալ, իրենք կը հասնին իրենց մէջ միեւնոյն դրամագլխով ընկերութիւն մը կազմել շահաբաժնի վրայ, այն պայմաններով եւ այն հիմնքով վրայ, ինչպէս որ կառավարութիւնը ֆոնֆոնիսիոնով չը պարտաւորուի ալ մենայնորհի ընկերութեան եւ կ'ապահովեն տարեկան 12-15 միլիոն ֆրանքի հասոյթ մը ալ կառավարութեան: Հակառակ պարագային կը խնդրեն որ իրենց որոշ պայմանագրով մը տրուի յիֆոսախիսի համար, նաեւ կուզեն որ մենայնորհեալը ընկերութիւնը պարտաւորի դնել իրենց բոլոր ծրարագրերը, նախական կամ պատրաստի, գործիքները եւ ամեն նիւթ որ ծխախոտի պատրաստութեան կը ծառայէ: Դաւանք մասնաւոր գործարանի համար կառուցած շէնքերը եւ վերջապէս իրենց հատուցում մը կամ վարձատրութիւն մը ընէ կառավարութիւնը ի փոխարէն փաստ, եւ կամ իրաւունք ունենան ապագայ մենայնորհի ընկերութեան 60 0/0 շահաբաժնիները գնել: Ասկէ զատ գործարանատէրքեր կրկն անգամ բացարձակ գրութիւններով երեսփոխաններու ծանուցագրերն առնին կրկնելով վերոյիշեալ պահանջներն եւ պնդելով իրենց օրինական իրաւանց վրայ, կոչում րբին անոնց հայրենասիրութեան եւ մարդասիրութեան որ մերժեն իրենց քուէն ալ մենայնորհի համար:

Բայց լուր մը որ շատ ստոյգ եւ արժանահաւատ աղբիւրէ իմացայ այսօր, այն է թէ, երէկ կառավարութիւնը Լոնտոնի դրամատէրերու խումբակէ մը հետագիր ստացած է որ կը խոստանայ 5 միլիոն անդլիական իւրայի (125 միլիոն ֆրանք) փոխառութիւն ալ Պուլիարիոյ շատ աւելի մատչելի պայմաններով: Եթէ ճիշդ է, բնական է թէ խնդիրն ինքնին կը փոխուի յանկարծ եւ կառավարութիւնը ինք պիտի ուզէ որ Սօպրանիէն մերժէ փոխառութիւնը եւ այն ատեն թերեւս միայն մի քանի շաբաթ վերջնոր փոխառութիւն մը նոր պայմաններով ներկայացուի ժողովին:

Տեսնենք, Պուլիարիոյ վիճակը ներկայիս շատ կրիտիկական է. ինչիւ թէ պարագաներն այնպէս տնօրինէին որ թէ կառավարութեան եւ թէ ժողովուրդին համար լաւագոյն ելք մը եւ նպաստաւոր դրութիւն մը առաջ գայ:

Նախորդով յիշած էինք թէ Տէր Յովհանն աւագ քահանայն առժամաբար հիւր կը գտնուի քաղաքս. մինչդեռ Առժամ. ինքնակալութիւնը զինք հրաւիրած է եղբոր մասնաւորապէս: Տէր հայրը պատրաստութիւններ կը տեսնէ երկուշաբթի վարժարանն ալ վեր-

ադարանալ մինչեւ յարմար վարժուհի մը բերուիլը: Իր բարեկամաբան առաջադրութեանց յաջողութիւն կ'ըզանք եւ Սօֆիայի ազգայնոց ալ ասկէ վերջ միութեան եւ ազգ. պարտաճանաչութեան ուղին յարատեւել կը մագթենք:

Արմենակ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազնիւ Ազգայիններ:

Շուշ երեք տարիներէ ի վեր՝ քաղաքիս արգոյ ազգայնոց ցոյց տուած նախաձեռնողիքի ոգին ու ջերմ համակրանքը՝ դէպի Ազգ. վարժարանն ու տոհմային դաստիարակութիւնը: Կը քաջալիրեն, թաղ. խորհուրդս, որ համարձակօրէն ներկայիս կուգայ պարզել ազգային այս հաստատութեան արդի վիճակն, որ օգնութեան կը կարօտի այժմ առաւել քան երբէք:

Մեծ պարծանք մը ու փառք մըն է, արգարեւ, Յօնաթանցու բնակ հայրուս համար, որ, տուկալով ամեն դժգոհութեանց, բարձրացուցինք, յարակից մեր Սեկեղեցուն, Հայկական երկսեռ վարժարանն, որ տարուէ տարի իր ցոյց տուած յառաջդիմութիւնով, այսօր իր երկսեռ հայ աշակերտաց թիւը յաջողած է բարձրացնել մինչեւ հարիւրի:

Թաղ. խորհուրդս, ջերմապէս համոզուած ըլլալով ազգային դաստիարակութեան և Ռուսման լեզուին ուսուցման աւագ կարգիւ, լուծեանք՝ մեր ապագայ սերունդին տեւականութեան ու յաջողութեանը մասին, առանց ի նըկատի առնելու ազգային ո՛ր եւ է հաստատուն եկամուտի մը չգոյութիւնն ու վարժարանիս արդէն ի՞նչ նիւթական անախտնեմի վիճակը, համարձակութիւնը ունեցաւ պաշտօնի կոչիլ չորս ուսուցիչներ Ներկայ 1904-1905 շրջանին համար, որոց ամսական վրձարումներուն վրայ աւելցնելով Սեկեղեցու և վարժարանին յարակից ծախքերն, կունենայ ամսական 500-600 ֆրանքի ծախք մը:

Արդ, Թաղ. խորհուրդս՝ Նկատելով թէ՛ արգոյ ազգայնոց և թէ՛ խորհուրդիս տաճած մեծ փափաքն ու սէրը՝ դէպի ազգային մանկուսն դաստիարակութիւնը:

Նկատելով վարժարանիս ներկայ դրութիւնը պահպանելու եւ յարատեւելու մեծ անձկութիւնն ու չքաւորութիւնը,

Նկատելով Ուսուցչ. մարմնոյն ամսականներուն երեք չորս ամիսներէ ի վեր անվճար մնացած ըլլալը, ու անձնուիրաբար իրենց գնահատելի աշխատութիւնը:

Որոշեց, յառաջիկայ զեկտեմբեր ամսոյ մէջ, հանգանակութեան մը ձեռնարկել, որուն համար՝

Կոչ կընէ քաղաքիս ազգային մեծապատիւ Տ. Տ. վաճառականներու, պաշտօնատարներու, խանութպաններու, և մեր պատգուիտ եղբայրներու ազգասէր ոգւոյն, որպէսզի հաճին, ըստ մեր նախնի ազգային աւանդութեանց, իրենց լիառատ գրաստական նուէրներով օգնել ու օժանդակել մեր միակ պարծանքն ու մխիթարալքը եղող այս նախնական հաստատութեան:

Յայտնելով, կանխաւ, մեր խորին շնորհակալութիւնը՝ յանուն հարկւր երկսեռ ուսանող հայ մանկուսն:

Ի գիմաց Թաղական խորհուրդին, Աստիճակային Աստիճակային Մ. ԱԼԹՈՒՆԵԱՆ Ե. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Փօսթաւան, 30 Նոյ. 1901

ՆԱԽԱԿ ՏՐԱՊԻԶՈՆԷ

Սեւ Ծոփի այդ կարեւոր նաւահանգիստէն հոկտ. 27 թիւով Բըրո Արմենիայի ստացած մէկ նամակին հետեւեալ ուշագրաւ մասերը կը քաղենք.

Բիզէի՝ որ պաթուկի եւ Տրապիզոնի միջեւ հաստատուած աւան մըն է, խոնաւ եւ մգլտած մութ բանտին մէջ այժմ 30 չափ Հայեր կը գտնուին խիստ թշուառ եւ միակ վիճակի մէջ:

Անոնք Տրապիզոնի գիւղերէն Ռուսիա գաղթած էին, հոն քիչ քանի տասնիակ բռնակ շահելու. որպէսզի կառավարութեան պահանջած ծանր տուրքերը եւ իրենց դժբախտ ընտանեաց պարէնը հալթէին: Հոն 2-3 տարի տաժանակիր աշխատութեան վերջ, հայրենիք պիտի վերադառնային, բայց թոյլտուութիւն չի կար. որոշեցին առաջապատանաւ մը վարձել, ապահովաբար գիւղերը ցամաք հանելու պայմանաւ: Նաւը հոկտ. 1 սկիզբին ճամբայ ելած է դէշ ողով մը. նաւապետը զանոնք ցամաք կը հանէ ծովեզերք մը, ուր կը չըջապատուին աւազակներէ: Աւազակապետը «յանձնուեցէք, եթէ ոչ ձեզ կը մոռցնենք» կը գոչէ. գիւղացիք սարսափահար եղած. իրենցմէ մին աշխուրհէր կը քաշէ ու կրակ կընէ նաւապետին վրայ (չի գիտցուիր թէ մեռած է թէ վիրաւոր): Եւ կը յաջողի ընկերի մը հետ փախչիլ: Աւազակապետին հրամանով Հայերէն երեքը կը պահուեն եւ միւսները կը կողպաւորեն:

Փախչող երկուքը Ռիզէ կը հասնին ու Ռուսիոյ զեպանին կը բողոքեն: Կառավարութիւնն ալ իմանալով, քանի մը տասնեակ զինուորներ կը զրկէ որոնք կողպաւորած Հայերը բռնելով բանտ կ'առաջնորդեն: Կրտսէի թէ աւազակներէ մէկ քանին ալ բռնուած են. բայց ասոր հաւատք չեն բնձալն: Ոմանք կըսեն թէ նաւապետին լարած թակարգն էր այս դէպքը: Բայց իրողութիւնը սա է որ վախն հետեւեալ օրը հրամայեց առագաստանաւ աչրել, եւ Ռիզէի, Աթրէնայի, Սորաիի, Արեւալիի եւ Վիցէի բոլոր նաւապետները հաւաքելով անոնցմէ կրաշխաւորութիւն առաւ:

Բանտարկեալ Հայերուն վիճակը Պոլսէ դալիք որոշուեցն կախեալ է: Խաբէրդի գիւղերէն չորս 50 հայեր, որք Ռուսիա կը գտնուէին, սահմանադուրեւ անցնելով իրենց սեղերը վերադարձած էին: Ասոնցմէ 24ը

ձերբակալուեցան եւ ամիս մը բանտարկուելէ վերջ Տրապիզոն զրկուեցան կրկին Ռուսիա արտաքսուելու համար: Հայերէն մէկը ճանքան մեռաւ ու թուրքերը զանի թաղեցին, մէկ հասն ալ Տրապիզոն հասնելուն մեռաւ, որուն հօրը իսկ չի թողուցին որ իր զաւակը տեսնէ. միայն՝ զիակը կըցաւ գրել: Միւսները զրկուեցան իրենց եկած տեղը:

1895էն մնացած բոլոր տուրքերը կը հաւաքեն: Որոնք որ ընտանիքով արտաքսուածն կը գտնուին, անոնց հողերը կը վաճառուին. եւ որոնք որ հող չունին ու գուրքը կը գտնուին, անոնց տուրքերն ալ ներկայ եղողներուն վրայ կը բեռնեն: Այդ գումարները հաւաքելու համար մասնաւոր հարկահաւաքներ զրկուեցան գիւղերը եւ բնակիչներուն բռնութեամբ ստորագրել տուին թէ կը ստանձնեն բացակայ եղողներու պարտքերը: Գիւղացիք յուսահատ, 47 ստորագրութեամբ խնդրագիր մը ներկայացուցին, բայց անօգուտ: Այժմ չեն գիտեր ինչ ընելիքն են:

Երեք ամիսէ ի վեր Ռուսոյ-Ջուրի կաթողիկ Հայերուն ալ արգիլուած է իրենց տեղէն գուրս ելնել: Կիւմանաք նաեւ թէ այս օրերս նոյն արգիլութիւնը կը կարգուի նահանգի հայ բնակիչներուն:

Վանայ, Մուշի եւ Բաղէշի բնակիչք իրենց անտանելի կացութեան պատճառաւ ստիպուած են Օրթաքոթ տեղեան գիւղ: Ռուսիա օգնուելով իրաց այս տխուր վիճակէն, ժամանակ չի կորսնցնելով, վանական կրօնաւորներ կը զրկէ օրթաքոթներու թիւը աւելցնելու համար:

Հայերու արգիլումն է այսինչ կամ այնինչ յաճախողներու հետ գործընել: Կախառակ պարագային խանութի գոցել տալու սպառնալիքին տակ կառավարութիւնը Ռուսիայէ եկող խաւով գաղթականները քաղաքիս քրք ճարաններուն եւ պանդոկներուն մէջ կը լեցնէ մէկ երկու ամիս շարունակ. կը խոտաւնայ վարձք վճարել, բայց ոչինչ կուտայ: Մէկ խօսքով քաղաքը անտանելի դարձած է Հայոց համար:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Տ. Տ. ԳԵՈՐԳ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Կրիկիոյ Կաթողիկոս ընտրուած է ԳԵՈՐԳ. ԵՊԻՍ. ԵՐԷՅԵԱՆ, որ Պոլսոյ մէջ Երուսաղէմայ Պատրիարքի փոխանորդն է:

— Մշոյ Պատր. Փոխանորդ Տ. Խոսրով վարդապետ հաջորդած է Պատրիարքին թէ Առաքելոց վանքին մէջ գտնուող որբերը ըստ նախորդ զեկուցման փոխադրուած են Մուշ. և այժմ յիշեալ վանքին մէջ կը գտնուին միայն Տ. Յովհաննէս վարդապետ և վանքին ծառաները:

— Կարնոյ Առաջնորդը Նոյեմբ. 20 թիւով կը գրէ թէ մինչեւ Նոյեմ. 17 քիչ շատ փտաճաւութիւն եկած էր ամենուն վրայ, և սկսած էին տունները դառնալ. բայց Նոյ. 17 Նոր և բուռն ցրիկով վերստին ահաբեկեց ժողովուրդը, և աւելցուց խեղճութիւնը: Փոփման դատապարտուած են հայոց մայր-եկեղեցին, եւ կրան, Ըլըճա և Պատիշէն գիւղերուն եւ կեղեցիները: Ոչ-Կարնեցի եկոր-

ներք կամ գրանցները հետզհետե կը հեռացուին քաղաքէն, և կա-
րողութիւն ունեցողները կարնոյ
քիչ շատ հեռաւոր գիւղերը կը
քաշուին:

—Կարնոյ արկածելոց նպատակ
հասցնելու համար եղած դիմումին
վրայ, տեղւոյն թաղ. խորհուրդը
որոշած է 3-4 վաճառականի յանձ-
նարարի որ քաղաքիս մէջ հա-
գանակութեան ձեռնարկեն, կը
յուսանք որ ամեն անհատ, բո-
լոր կարողութեան, չպիտի մերժէ
աջակցել տնտեսապար ու անտառ
մնացած կարնոյ մեր արեւնակից-
ներուն, որոնց վիճակը աներեւա-
կայելիօրէն անտանելի եղած է
կարնոյ յատուկ ստանաշունչ ձմե-
ռին պատճառաւ:

—Երեսուցի մայր Տ. Յարութիւն
Պատրիարքը՝ որ բաւական ատեն
կարնոյ Առաջնորդութիւնը վա-
րած է աղքեցիկ կերպով, գումար
մը զրկեց տեղւոյն արկածեալ
աղքատից:

—Կարմիր վաճառի փոխ-վաճա-
հայրը նոյնմ. 17 թուով գրած է
թէ այդ վաճառի որբանոցը կար-
նոյ երկրաշարժէն չէ փաստած և
որբերը, որք 150 հոտ են, ի-
րենց դասառութիւնը կը շարու-
նակեն:

—Ստոյգ աղբիւրէ մեզ կը հա-
զորդուի թէ Պալատէի Հոգաբար-
ձութիւնը գեկտ. 2ին վերջնակա-
նապէս որոշած է, յառաջիկայ
գարնան տեղւոյն եկեղեցին հիմնո-
վին նորոգել, հայկական ձեռի վե-
րածելով, իսկ գմբէթները շինել
բելգիական ոճով. կը կարծուի
թէ Ռուսմանիոյ եկեղեցիներուն մէջ
եղանակն պիտի ըլլայ շինուելիք հայ
կաթան եկեղեցին, Շինութեան հա-
մար դրամազուլիս մը պատրաստ է
եղեր, սակայն դա չի բաւեր ամբողջ

ծախքին, ուստի Հոգաբարձութիւ-
նը պիտի ստիպուի բարեպաշտ աղ-
քայնոց աջակցութեան դիմել:

Մենք վստահ ենք թէ եկեղեցի-
ւոյ շինութեան համար գրում տը-
ռողներ մեր մէջ չեն պակսիր, և
փաստաւորապէս կը կառուցուի:
Բայց առանց վարժարանի ուղեւ
կեղեցին մեր չէ 30-40 տարի
վերջ: Ուստի բաւ մեզ փափաքե-
լի էր որ Հոգաբարձութիւնը նախ
տեղւոյն վարժարանին ողբալի վի-
ճակը բարելաւէր ու յետոյ եկե-
ղեցիին վերանորոգութեանը ձեռ-
նարկէր:

—Աստրիացի Օր. Աննա Յը-
րանկ, 17-18 տարեկան, փափա-
քելով Հայ-Եկեղեցւոյ որդեգրուիլ,
խնդրագիր տուած է Պատրիար-
քարանի, որ հարկ եղած պաշտո-
նական ձեւակերպութիւնը կը կա-
տարէ: Կրտսի թէ հայ երիտա-
սարդի մը հետ նշանուած է այ-
դէն:

—Մոսկուայի հռչակաւոր Լա-
զարեան ճեմարանի չէնքին դէմ
աղկանց յատուկ նոր ուսումնա-
բունի մը շինութեան պիտի ձեռ-
նարկուի, որուն 25-30 հազար
րուպլի ծախք յատկացուի է:

—Թիֆլիսի Հայոց վաճառի մայր
եկեղեցիներին նորոգութիւնը ա-
ւարտած է:

—Թաւրիզի Հայուհեաց երկու
Բարեգործական Ընկերութիւննե-
րը միացած ըլլալով, հետզհետե
իրենց դործունէութեանց շրջանու-
կը կընդարձակեն, և Ուրմի գա-
ւառի հայ գիւղերուն մէջ նորա-
նոր վարժարաններ կը հաստատեն:

—Ուրմի քաղաքի Հայոց վար-
ժարանն ալ սեպտին բացուած ը-
լլով, բարեկարգ դաստիարակ
մէջ կը գտնուի: Եւս կաթողիկոսն
վարժարանը ոչ մէկ հայ տղայ չէ
մնացած:

—Ուստի մէջ հայ բողոքակա-
նաց յատուկ նոր ժողովարան մը
կառուցուած ըլլալով, կիրակէ օր-
նաւորութիւն պաշտամունքը և երեցի
ձեռնագրութիւնը տեղի ունեցած
է ինկարկալութեան տասնի չափ
հայ և ամերիկացի երէցներու:
Ինչպէս կը յիշեն մեր ընթերցողք,
այդ նորաշէն եկեղեցւոյ կառուց-
ման ծախքին մեծագոյն մասը Ա-
մերիկացւոց կողմէ հայթաղութեան
է:

—Տիգրանակերտցի Մ. Գաս-
պարեան և իր կիներ Մարիցա Նի-
նօրք կը գաղթեն չքաւոր վիճա-
կի մէջ. ուստի իրենց երկու զա-
ւակները որբանոց դնել կը հար-
կադրուին: Մարեցա Յակոբ Կա-
րապետեանի հետ սէր կը հաստա-
տէ և օր մը իր ունեցածները
կառնէ ու սիրահարին հետ Լոզել
կը փոխի, ուր իր ամուսիններ
կը պատկուին Լեհ երեցէ մը: Շու-
տով գաղտնիքը մէջ տեղ կիլլէ և
Մ. Գասպարեան դատի կը դիմէ
կնոջը և զանի հրապարակուի դէմ:
Յակոբ Կարապետեան կը դատա-
պարտուի 6 ամիս բանտային աշ-
խատութեան (օրը 12 ժամ քար
կտորելու): Մարիցա որ յիշ է ե-
ղեր, 6 ամիս բանտը պիտի մնայ
մինչև որ գաւազը ծնի. և անկէ
յետոյ ասոր վերջնական դատը պի-
տի տեսնուի:

—Կարապետ Մարգարեան հայը
գաշունով ծանրապէս կը վիրաւո-
րէ իռլանտացի մը, զոր իր կնոջ
հետ սիրա-ին յարաբերութեան մէջ
կը տեսնէ: Մարգարեանի կինն ալ
իռլանտահի է եղեր. վիրաւորողը
բռնուած է:

—Արտասահմանի քանի մը քա-
ղաք իրու մէջ պաշտօնավարած ու
լաւ վկայականներ ստացած քա-
հանայ մը այժմ անպաշտօն, կը
խնդրէ խմբագրութեան ծանուցա-

նել թէ ուր որ քահանայի պէտք
կայ մեզ դիմուի:

ՆՈՐ ԶՈՆԵՐ

Սօփիայի թերթերէն ցաւ ի
սիրտ կ'իմանանք թէ Լափոնէի
մէջ կախուած են երկու հայ եւ
երկու պուլկար յեղափոխականներ:
Մին Պետրոս Սիրէմճեան և միւ-
սը Օննիկ Թորոսեան, Պուլկար-
ները՝ Մէրճանօֆ և Եօրիսթօ:

Թէեւ նոյն թշնամիին դէմ բայց
օտարի հայրենիքին համար զո-
հուող այս հայ քաջերը իրենց ե-
ղերական մահուամբը անգամ մը
ես կուզան ապացուցանել թէ Հա-
յը ոչ միայն իրեն կամ իրենին
համար, այլ օտարներու սիրոյն
ալ ի հարկին կը զոհէ ինքզինքը:
Ֆիլիպպի պուլկար եկեղեցիին
մէջ հոգեհանգիստ կատարուած է
և Հնչ ու Դաշն. հայ յեղափոխա-
կան մասնաճիւղերը պսակներ նը-
ւիրած են:

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԿԱՄ

ՄԻՄՈՒՆԶ ՀԱՅԱՍՏԱՆ

Այս երգարանի Բ. տպագրութիւնն
է որ այսօր լոյս տեսաւ, աւելի ճոխա-
ցած, բարեփոխուած եւ մաքուր թուղ-
թի վրայ տպուած: Հակառակ գնոյն
աժանութեանը, կը պարունակէ այն
բոլոր հին եւ նոր աղբյուրները
որոնք ընտիր եղանակ ունին ու կեր-
պուն հայ ժողովուրդի ամեն դասա-
կարգէն

Գին 1 Ֆր.

Ստանալու համար բոսթի ծախքը
10 սանդիւ պէտք է միատեղ զրկել
Իրաւունքի խմբագրութեան վառնա:
Կը ծախուի նաեւ Գահիրէի մէջ մեր
գործակատար Տ. Կարապետ Երզնկաց-
եանի խառնութիւն, Ուստի (Ամերիկա)
Տ. Յակոբ Յարանդի, Չիքսկո Տ. Մ.
Գարակեալուրեան եւ Ընկ. քով
Պալատէի Տ. Ղազար Պողոսեանի վա-
ճառատունը, Գէօրգիէի Տ. Ղ. Կրո-
նիկեանի քով:

ՀՈՒԳՈՒԳ

1877ի վերջերը վառնայի մէջ հոտորա
կուող Հոգաբարձութիւնը մեր
հակառակորդներէն՝ որոնց թէ՛ որակը և թէ՛
քանակը արհամարհելի է, խեղ ու խիւղերուն
պատճառաւ, հրեանք բարեկամներ առա-
ջարկեցին Հոգաբարձի մէջ իմ գրած յօդուածներս
արտատպել իրաւունքի լաւատիրականի բաժ-
նին մէջ: Մենք գոհացում կուտանք այդ ա-
ռաջարկին, նկատելով մանաւանդ թէ շատ եր-
կար բան չէ:

«ՀՈՒԳՈՒԳ»-Ի ԾՐԱԳԻՐՐ

ՄՈՒՐԱՍԵՐԸ

Կազմութեանը ներք ի թմբեքուն մագսէտ վէ մու-
րատեմը պաշլըճա աթիւտէքի նօղթալարաւան ի-
պարէթ տիր:

1. — Տէվլէթի Ալիյէ Օսմանիյէնին թապաւի
միւսլիմէ վէ գայրեմիւսլիմէնին տիւյանթի ու միւ-
լիյէթի թէֆրիք ի թմբեքունի (աղբի ու կրտսի
խտրութիւն չի գնելով), ապէն հոգուգը սէրիէն-
սինին մուհաֆազաւ պապընտա միւլլէթի միւլթէմէտ-
տինէ միսլիմ (քաղաքակիրթ աղքեւրուն նման),
մէմալիքի մահրուսէի շահանէտէ տախի գահուը
էսասինին (սահմանադրութիւն) մէվլըթի իմրայա

վաճ օլընմաւընըն իզիլիաւընը կէօթլէրմէք վէ օ՝
եօլ իլէ էնալիին հուգուգընը մուհաֆազա ի թմբէք.

2. — Մէմալիքի Օսմանիյէնին միւլթէմէքին էգ-
վաճ պէյնիւտէ (ցեղեր կամ աղքեւրութիւն) պիր
գաշ սէնէտէն պէրու. մա՛թ թէ էսսիւֆ հուսուլա կէլ
միշ օլան պուղղ ու ատալէթին (թշնամութեան ու
ատելութեան) սէպէպէրինի կէօթլէրուպ, էնալիի
եէքտիկէրինէ եէնիտէն մուհաֆաթի սամթի իլէ
(անկեղծ սիրով) պաղլամագ վէ պու. եօլ իլէ անվա-
լը հազըրէի սիւսաթիյէնին թապիլէ (սամրացնել)
իտէպիլմէք իլիւն ումաթ թապաւի Օսմանիյէնին
եէքլիմուտ օլմաւը պապընտա սայ ու իզտամթտա
պուլլընմագ (շանադիր ըլլալ):

3. — Կազմութեանը շինուելիք հաֆթիտա պիր տէ-
ֆա նէշր օլընմագ իսէտէ, պիր հաֆթա զարթըն-
տա դուհուրա կէլմիշ օլան հաֆաթիսաթը սիյասի-
յէ վէ միւլիյէն օլտըղը կիպի, պիւս թաղրի (ան-
փոփոխ) վէ պիթաբաֆանէ տէրճ ի թմբէքլէ, գա-
րիւնու (ընթերցողները) հէր տիւրլիւ մէսալի
մուհիմէտէն (կարեւոր խնդիրներ) խապէրտար ի թ-
մէք. վէ կազմութեանը սալի պաղը կազմութեանը կի-
պի հիշ պիր միւլլէթ վէ շախա սաթլըմամը, վէ
ի թմբիսագ ի թմբիկի մէսլէքի իւմիտէն անլտը-
լաճաղը վէճէ իլէ, կալընըղ էնալիին հոգուգընը
մուհաֆազա ի թմբէք, վէ պինտէն ալէյ, էնալիյէ
վէ տէվլէթի խառնով պուլլընմագ օլտըղընտան, գա-
րէքըքալըղ վէ կախաթ թորաֆաւրըղաւան դաթի-
էն ալի վէ պէրի պուլլընտարապ, էիյէ էյի վէ
ֆէնայա ֆէնա տէմէքաւէն օլտալէքիյէնէնէք տիր:

Ասրըմըղ իզիլիաւընմա՝ աօղրու սէօլլէյէն չօգ-
տէֆա միւլթիւլաթա շարըըըը իսէտէ, պիւղ հէր

պիր շէյի կէօթլէմիւղէ ալմըշ օլտապ, էնալիի տա-
խի սայիր պիր թաղըմ կազմութեանը (նէշրիսաթը
քեաղիպէսինէ (սուտ հրատարակութիւններուն) ի-
նալիի սէմ ու ի թմբիպար ի թմբէքլէն գուրթարմագ
վէ կէօթլէրինի ալմագ իլիւն Պուլկարիտա Գա-
նուըն էսասինին մուհաթրիլէրէ վէրմիշ օլտըղը
սէրպէսաթիլմէն իսթիֆատէ ի թմբէքլէ շալըճաճաղը:
Կազմութեանը հէր քիմ էլիլէն ալմը իսթ օգուլուպ
անլապալիմէսի իլիւն՝ ալմագ թմբէքլէ իսանլէ
եաղըլաճաղը կիպի, ֆիսաթը տախի էնքէսին քէ-
սէսինէ միւսալի վէ միւսալի օլմագ իլիւն՝ սէնէ-
լիկի 5 վէ ալթը ալմըղը 3 ֆր. բէշին թային օլըն
մըշ տըր:

(Հուգուգ, նօմբր 1.)

Իրաւունքի լաւատիրական թիւով պիտի տը-
տապենք Հ. Շէվքուի խմբագրական յօդ-
ուածը որ Հոգաբարձի 1, 2 թիւերուն մէջ շա-
րաւանակելի մնացած է և 4 թիւին մէջ վերջա-
ցած պիտի ըլլայ:

(*) Ակնարկութիւն Պուլտոյ թիւք թերթերուն,
որոնք այն միջոցներուն թուրք զօրաց Թուրքի
տարած լաղթանակներէն ոգեւորած Սուլթանը ու
իր քաղաքականութիւնը փառաց ի փառս եւ իսթ-
րադնէն, եւ անոնց գիմակը վար առնող ուրիշ
թրքաւառ թերթ չի կար:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԵԳԻՅԷ

ԹԻԻՐԳԻՍ

Մուշ ճիվարընտա Արագ մա-
նաստըրընտա ասքերլէրտէն մու-
հասէրէտէ պուլընտն գահարման
Ֆէտայիլէրիմիզտէն Անգրանիկ չե-
թէսի իլէ պէրապէր՝ իքինճի տէ-
ֆա օլարագ՝ ասքէր գօրտոնընը
հարուպ տաղարա չէքիմիշ տիր :

—Տուրնիցա եագընընտա Գօբ-
րիվէն Գօլիպի նամ քէօյտէ Միւս
Սթօն կէօրիւմիւշ օլտըղընը Սօ-
ֆիատան պիր թէլէկրաֆ պիրտիր-
միշ տիր :

—Թիւրք տէվլէթինին թալէպի
իւզրէ՝ Եունան հիւքիւմէթի Տա-
մատ Մահմադ Բաշանըն Գօրֆու-
տան չըգուպ, Եունան թօփրաղըն
տան գաթիէն չէքիմէսինի թէք-
լիֆ ու թալիսիյէ իթմիշ տիր :

Եունան հիւքիւմէթինին երէն
թիւրքին խաթըր իշիւն չու հարա-
քէթի՝ պուլտան 9-10 սէնէ էվվէլ
Աթինատա «Միուլիւն» կաղէ-
թատը մուհարրիւրինին Սուլթանա
գարըն վէ թիւրք հուրուֆաթը ի-
լէ չըգուրըն օլտըղը կաղէթատը-
նըն նէլըինի մէնն իթմէսինի, վէ
պէշ սէնէ էվվէլ Պուլըգ նամ տի-
կիր պիր էրմէնինին թէքրար Ա-
թինատա նէլը իթմիկի «Գօմպա»
նամ ֆրանսըզճա կաղէթատը մէնն
իլէ մուհարրիւրինին Եունանիս-
թանտան գօվմասընը անտըրընը :
Շու ալիճէնապ (?) Եունանըրըն
պու տէրէճէ եալթագ վէ բէնկսիյ
հարէքէթինէ հագըրգաթէն թէէ-
սիւֆ օլընըր :

—Բարիս էլիսի Միւնիւր պէյ
մահէլի մէմուրիյէթինէ չիթմէք
իշիւն Սթանպուլտան հարէքէթ իթ-
միշ օլտըղը պիրտիրիլիյօր :

—Շու կիւնլէրտէ Սթանպուլտա
եէնիտէն բէք չօգ քիշիլէր տէր-
տէսթլէ թէվգըրֆ օլընմագտա տըր
լար . չըգան հոֆթա 48 սասթ
գարֆընտա թիւրքլէրտէն 150 քի
չի թուլթուլմուշ տըր :

Պու թէվգըրֆաթ կէչէնլէրտէ
Երաղը քէօշիլիւնտէ զուհուր իթ-
միշ օլտն եանկըն սէպէպի իլէ իճ
րա օլընտըղը Սթանպուլտան պիր
տիրիլիւն տիր . կէօյնա սօն թա-
հարրիյաթտան պիր եէնի «գօմբ-
լօ» պուլընըն, վէ պուլտան տօ-
լայը մէմուրլարտան վէ խատէմէ-
լէրտէն չօգլար թահթը իսթին.
թագա ալընմըլար : Մէքըրիւր հա-
րիկ մէսէլէսինտէ Սուլթանըն պիր
գարըն տախի զիմէտիւշ օլտը-
ղընտան տօլայը սիւրիլիւն իտի .
Պու տէֆա տախի Չատի իմէթ
պէլին մէտիւլի օլտըղը անլաշը-
մըլ :

Իշպու թէվգըրֆաթ ու թահար-
րիյաթ սէպէպի իլէ Սթանպուլտա
թիւրքլէրտէ հէյէճան ու րահաթ.
սըղըր բէք արթմըշ տըր :

—Սուլթան լաֆիմիթի եանի
Խըրթլագ Իւֆիւնէթի խասթալը-

ղը իլէ մուպտարըպ օլուպ, ըՍ-
թանպուլ թապիպլէրի իլէ գահմա-
յարագ, Պէրլինտէն մախսուս պիր
նամտար թապիպ կէթիլիլիլիլ օլ-
տըղը Լիպէքէ հագմըշ տըր :

—Սթանպուլ քօսթա նէլարէթի
պիր եէնի իլան նէլը իսթիւք,
Սթանպուլ մախսուս օլտն հէր
պիր մէքթուպ աշըգ քօսթայա
պրրագըլմասընը վէ եախստ քաղք
քօսթալ իւզէրինէ եաղըլմասընը
էմր իտիյօր : Գալար մէքթուպ.
լար Սթանպուլ իշիւն թիւրք քօս-
թահանէլէրինտէն գապուլ օլընմա-
յաճագ ըմըլ :

—Սթանպուլտօրի էճնէաի էլի-
լէր Թիւրքիյա իտիւլ օլընտն
մալլէրտէն ալընմագ կէօմրիւք ի-
շիւն իսթիլարէտէ պուլընըյօրլար,
Եէնի թարթիլիլին չիմտիտէն իճ.
րա օլընմասընա դարըն պաղը էլ-
շիլէր բրօթէսթ իթմիշլէր տիր :

ՏԱԽԻԼԻԹԷ

Իսթիլարը վէ թիւթիւն մօնօ-
բօլը ճէպլէլէրինին Սօպրանիտէ
գապուլ օլընմասընտան տօլայը
հէյէթի վիւքէլա իսթիֆա իթմիշ
տիր :

Հանկը բարթիլին չաղըրըլաճա.
ղը չիմտիլիք մէճնուլ իսթիւն, սա
պըգ Սթանպուլթիսթ բարթիսի
րէյիլիլէրինտէն Մ. Ռաշօ Բէթ-
լօվըն եէնի պիր հէյիլիլի վիւքէլա
թէլէքիլինտէ տալթէթ օլընտըղը րի-
վայէթ օլընըյօր . պաղըլար տախի
Յանքօվիսթլէր իլէ Սթօյիլիլիլիլ
լէրին միւլթիլիլիլ վիւքէլայը
թէլէքիլ իտէճէքլէրինի սէօյլէմէք-
տէ տիրլէր :

ՐՈՒՍԻԱՏԱՆ ՀԻՃՐԷԹ

Րուսիան վէ Պուլկարիա իս-
լամլարընըն թիւրքիյա հիճրէթ
իթմէքտէ օլտըղլարը կիպի, Րու-
սիատան տախի պիր չօգ իսլամ-
լար թիւրքիյա կիթմէքտէ պու-
լընտըղլարընտան, հիւքիւմէթ պու-
մուհանիլէրինէ Էօնիւնիւ ալմագ ի-
շիւն, Թիւրքիյալը մուհանիլէրի
գապուլ իթմէմէկէ իճպար իթմիշ
տիր :

Պու պուպտէ Պաղլէ Սէրայըն.
տա նէլը օլընտն թէրիման կա-
ղէթասընտա չու եօլտա պիր պէնտ
կէօրիւմիւշ տիր :

Գրըմ րուհանի տախիսինտէն էհա-
լիյէ իսթիպլէն նէլը օլընտն նասիլթ
նամէտէ թէքթի տիրար վէ հիճրէթ
պիր սէպէպ օլմայուպ, պու իշի խաղ
արասընա գօյնլար ֆիթնէ օլտըղլա-
րընը սէօյլէլուպ, վէ քէնտիլէր պիր
եէրտէ րահաթ օլմայուպ, եօլարտա
խարապ օլտըղլարընը խապէր իլէ,
եէրլէրինտէ րահաթ վէ հիւքիւմէթի-
միզէ սէտագաթտա օլմայը թալսիյ
իտիյօր :

Նիհայէթ Սէվաստարօլ Օսման-
լը գանսուլընըն իլանը իւզրէ,
պուլտան պէօյլէ թիւրքիյա հիճ-
րէթ իտէճէք օլտնլար էվվէլէ
գօնսուլտա գաղ ճան վէ Նիւֆիւս
օլտըղլարընը պէյան վէ արղու-
հալարը Սթանպուլ խարթիլիլէ նա.

ղըրընա թագաթիլ իտիլէրէք էկէր
գապուլ օլընըրլար իսթիւն սօնրու
բաշարթլարը գալտ օլընմագ
տըր : Պէօյլէ րուխտթ ալմայան.
լարըն րասարթլարը գօնսուլտ
գալտ իթմէլէլէլի կապիւսիա վի-
լայէթլէրին պիր թիւն գաղլարը
նա իլան օլընմըշ տըր :

Պու եօլտա Րուսիատալի պիր
թագըմ իսլամ գապիլէլէրին թիւր-
քիյա կիթմէլէրինի մէնն իթ-
մէք, էրմէնիլէրին եէնի պէլա.
լարտան գօրթարմագ տըր . զիլա
մուհանիլէրին էն չըպաղլարը վէ
ալիւքաղլարը էրմէնիլէրին վի-
լայէթլէրինէ եօլմագտա ըտը-
լար :

—«Թայմ»-ա Բիթրապուրկտան
վէրիլէն մալիւմթա պինտէն,
Րուս Տախիլիլէ նագըրը կապիւ-
սիատալի մահէլի հիւքիւմէթլէ-
րինէ չու մասլտա պիր էմիրնամէ
եօլմալը տըր :

«Կապիւսիա էյալէթինտէ պուլընտն
Էրմէնի մուհանիլէրին նիգալըզ
հալլէր իւզէրինէ աղըգաթընըզ տա
վէթ իտէրիւլարթլարընտան ան-
լաշըլարը իւզրէ, մուհանիլ Էրմէնի-
լէրի կապիւսիատան չըգարուպ, եէ-
նիտէն թիւրքիյալը եօլմագ իշիւն
հէր պիր դայրէթիլիլ սէմէրէսիլ գալ-
մըշ տըր, վէ աքսի օլարագ անլէրին
մըգտարը արթմագտա օլուպ 40000տէն
զիյատէ տիր :

«Չօղլարը թէյաշլարընտան աճիլ,
թիւհարըլգաա վէ իշիլիլիլէրէրէ
պէթտէ պուլընտըղլարընտան հէր հիւ-
քիւմէթ աղըրլըգ օլմագտա վէ հէր էնա
լի արասընտա իսթիլիլիլ սէպէպլիլիլ
վէրմէքտէ տիրլէր :

«Պու Էրմէնիլէրին թիւրքիյա կիթ-
մէք իսթմէթտօլէրինտէն մասաա,
թիւրք մէմուրլարը տախի անլէրի
վաթանլարընա ալմէթ իթմէքտէն
մէնն իտիյօրլար : Բարթլարընըզ
պինտէն, թիւրք գօնսուլտլարը անլէ-
րին կէրի կիթմէթ իշիւն բաշարթլ-
լարընը գալտ իթմէյօրլար : Օ հալտէ
պու մուհանիլ Էրմէնիլէրին տէվմի
սուրէթտէ Րուսիատա գալմալարը իգ-
թիլա իտէճէք տիր :

«Պու հալտէ՝ օ՝ ինտանլար իշիւն ի-
տալէի հիւքիւմէթ չիմտիլէ գատար
օլտըղը իւզրէ տէվմի իտէմէլ :

«Պինտէն ալէյս պու պապտէ վէ-
րիլմիլ օլտն եիւքէք գարարը սիզէ
իսթարլէ, 1902 մարտ 1է գատար
Րուսիա տախիլիլիլ տէվմագ օլտն
պիւթիւն Էրմէնիլէրէ Րուս թագաա-
լըղընը գապուլ իթթիւրմէք իշիւն իգ
թիլա իտէն թէյապիլլէրին իթթիլիլալ
իթմէլիլ էմր օլընըր :

Բէգա՝ Րուս թագաալար օլտն քէօյ-
լիլէր կիպի Էրմէնիլէրէ իսթիւն ի-
տէճէք մահէլիլէր կէօսթլէրմէք մագսէ-
տի իլէ, իգթիլա իտէր քի անլէրին
նուֆուսլարընը գալտլարը հաղըրլան
ըն : Էվվէլէ Տուգօգլարլարըն սա
քիլ օլտըղլարը եէրլէրի, իգթիլա ի-
տէրսէ, պու մագսէտէ թախիս օլընըր :
Պու իսուսուստան տօլայը ամիլլէրինի-
զին րարթլարը պիլա թէլիլիլ պի-
զէ կէօնտէրմէնիլ րիճա օլտնուր :

ՄԻԻԹԷՆԷՎԻԹԷ

Ովիէտօնըն (Սպանիա) եպիսկո-
պոսը պիր մէքթուպ գապուլ իթ-
միշ օլուպ, մէքթուպտէ պիւթիւն
քիլիսէլէրի հագմագ թէհտիտի
կէօսթլէրիլիլ տիր :

—Սերպիա զրալը Ալիքսան-
տըրն տալընը միւրալալ Գօնսթան.
թիլիլիլ գրալըն Տրալա իլէ իլ-
տիվաճընա մուխալիֆ էֆէքտար պէ-
յան իթմիշ օլմասընտան տօլայը
Սերպիալա կիրմէսի մէնն օլընմըշ
օլտըղընտան, մէրգուլ վիլէնտան
Սթուրչիւնալա պիր բրօթէսթ եօլ-
լայուպ, վիւքէլա իլիլիլ Մ. Վու-
իշին գանուլը Էտտալիլ իլիլալ լթ-
մէքտէ օլտըղընը պէյան վէ քէն-
տիսինին վաթանընա ալմէթ իթ-
մէսինէ մուսատէ վէրիլիլիլ րէ-
ճա իթմիշ տիր :

ԱՊՕՆԷԼԷՐԻՄԻՉԷ

Տէֆաթլէ իլան ու իսթարա-
թըմը իւզէրինէ, կաղէթա պէ-
տէլիլի կէօնտէրմիշ օլտն ապօնէ.
լէրիլիլէր արղը թէլէքիւր իթմէք-
լէ պէրապէր . աքսի օլարագ, պու
կիւնէ գատար րէճա ու իսթարա-
թըմը գուլպա վէրմէյուպ, պօրճ
լարընը Էտտէմէլէրիլիլ թէլէսիլիլի.
միզի պէյան իտէրէք, պիր տահա
սօն տէֆա օլարագ, դեկլէմբերին
15ինէ գատար օ՝ կիպիլէրէ վատէ
վէրուպ, էկէր միւտէթի մէքթիւ-
րէ գարֆընտա իյֆաի տէյն իթ-
մէլլէր իսթիլա իսթիւնա՝ ի-
սթիլլէրի իլէ կաղէթալա տէրճիլ
հագըրմըղը թալէպ իտէճէլիլ :

ԱԶԴ

Վտուիլի աղգալիլ մանկապար-
տէլին համար կարող մանկապար-
տիլպանուհի մը կուլուր . գահա-
յուցիլ ճամաթոշակ . դիմիլ ան-
ճամբ կամ Նամակա Աղգ. Երկ-
սեւ վարժարանաց հոգաբարձու-
թեան :

«ԿԱՂԱՆԴԷԼԻ»

Պ. Վ. Գիւլիւքեան «Կաղանդ-
չէք» անունով տետրակ մը հրա-
տարակոմ է 32 փոքրագիր երես-
ներով : Տետրակին պարունակու-
թիւնն է ընտանեկան լեզուով հա-
ճելի ոտանաւորներ և «Կաղանդի
գիշիրը» խորագրով արձակ մը :

Գինն է 40 սանթիմ . կը ծա-
խուի Ա. Չարպահանէեան գրա-
տունը :

ԿՕՇԿԱԿԱՐ

Ճաշակուոր եւ տոկուն
կօշիկ հարկելու համար
դիմիլ Ստեփան խօրասան-
ճանի խանութը . փողոց
Մուսուլլա, Գիննը խիստ
չափուոր են :



Одговорникъ Н. Драгулевъ

Печатница «Взаимность», Варна